

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 28

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի ՆԻՍԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Մ. Մաթևոսյանը, Գ. Արշակյանը, Մ. Դատումյանը, Ա. Դատումյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հունանյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Գ. Սուքիասյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալներ Ա. Ներսիսյանն ու Վ. Սաֆարյանը, բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

- Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
- Հարկային արտոնություն տալու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում Արագածոտնի այգիներ և գինեգործարան ներդրումային ծրագրին հավանություն տալու և համայնքային սեփականություն հանդիսացող հողերը ուղղակի վաճառքի ձևով <<Արագածոտնի այգիներ>> ՍՊ ընկերությանը վաճառելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
- Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 14.03.2023թ. N 28-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
- Համայնքային սեփականություն հանդիսացող տեսանկարահանման սարքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
- Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. N 201-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/

8. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 09.12.2022թ. N 178-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/
9. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
10. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
11. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
12. Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա, Նոր Երզնկա և Ղազարավան բնակավայրերում փողոցների համարակալման մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
13. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
14. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
15. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
16. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի առաջին նիստի օրը սահմանելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 2 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը /ՄԺԾԾ/ համաձայն հավելվածների:

Զեկուցողը նշեց, որ նշվածը հանդիսանում է օրենսդրական պահանջ:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Հարկային արտոնություն տալու մասին

Ձեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Գույքահարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի, «Հողի հարկի մասին» օրենքի 10-րդ հոդվածի, ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն՝ համաձայն հավելված 1-ի:

19 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում Արագածոտնի այգիներ և գինեգործարան ներդրումային ծրագրին հավանություն տալու և համայնքային սեփականություն հանդիսացող հողերը ուղղակի վաճառքի ձևով «Արագածոտնի այգիներ» ՍՊ ընկերությանը վաճառելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջներով, հիմք ընդունելով «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի գլխավոր տնօրեն Լևոն Օհանեսյանի 25.05.2023թ. N01/35/277-2023 գրությունը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում խաղողի այգիների հիմնման, գինեգործարանի, մառանի եվ հյուրատան կառուցման ներդրումային ծրագրին հավանություն տալու և համայնքային սեփականություն հանդիսացող հողերը ուղղակի վաճառքի ձևով «Արագածոտնի այգիներ» ՍՊ ընկերությանը վաճառելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 11.03.2022թ. N 26-Ա որոշումը: Տալ համաձայնություն «Արագածոտնի այգիներ» ՍՊ ընկերության ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում Արագածոտնի այգիներ և գինեգործարան ներդրումային ծրագրին՝ համաձայն հավելված 1-ի, ինչպես նաև տալ համաձայնություն «Արագածոտնի այգիներ» ՍՊ

ընկերությանը (պետական գրանցման համար՝ 273.110.1220965, գրանցված՝ 02.03.2022թ., ՀՎՀՀ՝ 02853849) ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի վարչական տարածքում ներդրումային ծրագիրն իրականացնելու համար, համայնքի սեփականություն հանդիսացող 50.0472հա հողը ուղղակի վաճառքի եղանակով օտարելուն: Միաժամանակ, առաջարկել համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը ներկայացնել ՀՀ կառավարության քննարկմանը և հաստատմանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 14.03.2023թ. N 28-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» Աշտարակ համայնքի ավագանու 14.03.2023թ. N 28-Ա որոշումը լրացնել 1.2 և 1.3 հավելվածներով:

Զեկուցողը նշեց, որ նշված որոշման նախագծի ընդունումը անհրաժեշտ է համայնքային հիմնարկի և բնակիչների միջև իրավական կապն ապահովելու նպատակով:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - Համայնքային սեփականություն հանդիսացող տեսանկարահանման սարքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ ՆԳՆ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժնի պետի 30.05.2023թ. N35/3-1861 գրությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող տեսանկարահանման սարքերն անհատույց օգտագործման իրավունքով ՀՀ ՆԳՆ

ուստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժնին տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. N 201-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շ. Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. N 201-Ա որոշման հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ:

Զեկուցողը նշեց, որ որոշման նախագծով որոշակի փոփոխություններ են կատարվում <<Աշտարակի մշակույթի պալատ>> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 8 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 09.12.2022թ. N 178-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Շ. Քոթանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 09.12.2022թ. N 178-Ա որոշման հավելված 12-ը շարադրել նոր խմբագրությամբ: Շ. Քոթանյանը նշեց, որ որոշման նախագծով առաջարկվում է <<Աշտարակ համայնքի թիվ 15 Հովիտ մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում ավելացնել ևս մեկ խումբ:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 9 - ՀՀ Արագածուրնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 08.05.2023թ. N 2/փ-117 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-001-0352-0016 ծածկագրով 0,2428հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից 0,0446հա պտղատու այգու /հնդավոր/ նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը: Նշված փոփոխությունը սահմանված կարգով արտացոլել համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում և Աշտարակ քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 10 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N550-Ն որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21 կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացիների և իրավաբանական անձանց դիմումները, ուղղակի վաճառքով օտարել Աշտարակ համայնքի բնակավայրերում առկա հողատարածքները:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - Հողամասերի փոխանակություն կատարելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման պահանջներով, Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Արա-1 թաղամասում գտնվող /ծածկագիր՝ 02-001-0145-0021/, Ջաբել Սերյոժայի Մխիթարյանին, Վաչագան և Վարսենիկ Սեյրանի Մխիթարյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 606քմ տնամերձ հողամասը փոխանակել համայնքային սեփականություն հանդիսացող, 02-001-0152-0016 ծածկագրով, քաղաք Աշտարակ, Արա-1 թաղամաս, 3-րդ փողոց, N 56 հասցեում գտնվող 587քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի հետ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 12 - Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա, Նոր Երզնկա և Ղազարավան բնակավայրերում փողոցների համարակալման մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով,

1. Աշտարակ համայնքի Նոր Եղեսիա բնակավայրում գտնվող նրբանցքին տալ 1 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Եղեսիա բնակավայր, 1-ին փողոց, 1-ին նրբանցք:

2. Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրում գտնվող փողոցին տալ 38 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Նոր Երզնկա բնակավայր, 38-րդ փողոց:

3. Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրում գտնվող փողոցին տալ 11 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Ղազարավան բնակավայր, 11-րդ փողոց:

4. Աշտարակ համայնքի Ղազարավան բնակավայրում գտնվող փակուղուն տալ 1 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Ղազարավան բնակավայր, 11-րդ փողոց, 1-ին փակուղի:

5.Նոր Եդեսիա, Նոր Երզնկա և Ղազարավան բնակավայրերի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 13 - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների և իրավաբանական անձանց՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական փոփոխելու վերաբերյալ առաջարկություններին:

19- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 14 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Սոս Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 29 կետի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն, 29.12.2011թ. N 1918-Ն և N 1920-Ն որոշումների պահանջներով, համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել: Ձեկուցողը նշեց, որ փոփոխության դեպքում նրանք պարտավոր են վճարելու կադաստրային արժեքների տարբերությունը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 15 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու, կառուցապատման և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 16 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի առաջին նիստի օրը սահմանելու մասին

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի առաջին նիստի օրը և ժամը սահմանել 2023 թվականի սեպտեմբերի 12-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2023 թվականի հունիսի 15-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

- ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____
- ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____
- ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ _____
- ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____
- ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ _____
- ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____
- ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____
- ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ _____
- ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ _____
- ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
- ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ _____
- ՆԱԶԵԼԻ ԱՐՄԵՆՅԱՆ _____
- ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____
- ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ _____
- ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____
- ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____
- ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻՉՅԱՆ _____
- ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____
- ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ